Արևային տեխնոլոգիաների ներդրումներ

GEFF Green Economy Financing Facility

European Bank for Reconstruction and Development

ԵԿԵԼ Է ԺԱՄԱՆԱԿՆ ՕԳՏՎԵԼՈՒ GEFF-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԻՑ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՆ՝ Ի ՇԱՀ ՁԵՐ ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Ցանկանում եք ներդրումներ կատարել և Ձեր բիզնեսի գործունեության վայրում տեղադրել վերականգնվող էներգիայի համակարգ՝ ծախսերը կրճատելու ու տարածքն առավելագույնս արդյունավետ օգտագործելու նպատակով:

Ահա չորս պատճառ, թե ինչու է GEFF-ը Հայաստանում ծրագրի ֆինանսավորումը Ձեզ համար:

Դոնորներ՝

GREEN CLIMATE FUND

CIF CLIMATE INVESTMENT FUNDS

ՊԱՏՃԱՌ #1

ՄՐՑՈՒՆԱԿ ԱՐԵՎԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Օգտագործե՛ք Հայաստանի տարեկան 2,500 ժամ տևողությամբ արևափայլի էներգիան՝

i. կատարելով ներդրում միջինում 6 տարի ետգնման և 20-25 տարի շահագործման ժամկետով,

ii. վգալիորեն կրճատելով գործառնական ծախսերը,

iii. բարձրացնելով ֆինանսական կայունությունը՝ նվազեցնելով կախվածությունը էլեկտրաէներգիայի սակագներից:

Հայաստանյան շուկայում առկա, ու ՎԶԵԲ-ի GEFF ֆինանսավորմանը համապատասխանող արևային տեխնոլոգիաներն են՝

Ֆոտովոլտայիկ (PV)

Ջրատաքացման (ջերմային)

ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Էներգիայի արտադրություն՝ **տարեկան անհրաժեշտ ծավալների մինչև 95%**

Ներդրման ետգնման ժամկետ՝ **5–7 տարի**

Շահագործման ժամկետ՝ **20–25 տարի**

Արևային վահանակների երաշխիք՝ **25 տարի (ստանդարտ)**

Փոխակերպիչների գործարանային երաշխիք՝ **5 տարի**

ՋՐԱՏԱՔԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Էներգիայի արտադրություն՝ **տարեկան անհրաժեշտ էներգիայի մինչև 95%**

Ներդրման ետգնման ժամկետ՝ **3–5 տարի**

Սարքավորումների ծառայության ժամկետ՝ **15 տարի**

Ծառայության երաշխիքի միջին ժամկետ՝ **2 տարի**

Նշում. ներկայացված հաշվարկները հիմնված են 2018-2021թթ.-ին Հայաստանում իրականացված ներդրումային ծրագրերի միջինացված տվյալների վրա:

ՊԱՏՃԱՌ #2

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդյունավետ արևային էներգիայի ծրագրեր իրականացնելու համար լավագույն տեխնոլոգիական լուծումները գտնելու նպատակով, GEFF-ն առաջարկում է՝

- կանաչ ֆինանսավորման պահանջներին համապատասխանող ստանդարտ ներդրումային **Կանաչ տեխնոլոգիաների ցանկ**, որը հասանելի է հետևյալ հղումով՝ **techselector.com/armenia**
- առավել խոշոր ծրագրերի համար՝ տեխնիկական մասնագետների կողմից լրացուցիչ գնահատման ծառայությունների մատուցում:

ՊԱՏՃԱՌ #3

ԿԱՆԱՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

GEFF-ի գործընկեր ֆինանսական կազմակերպությունները մշակել են մրցունակ ֆինանսավորման լուծումներ՝

i. երկարաժամկետ ֆինանսավորում՝ կարճաժամկետ դրամական հոսքերն առավել արդյունավետ օգտագործելու նպատակով,

ii. տեղական և արտասահմանյան արժույթներով մրցունակ պայմաններով ֆինանսավորում,

iii. լիզինգի հնարավորություն, որն այլ օգուտներից բացի, չի ենթադրում գրավադրում:

ՊԱՏՃԱՌ #4

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ (ԴՐԱՄԱՇՆՈՐՀ)

Բիզնեսի սեփական կարիքները բավարարելու նպատակով իրականացված արևային էներգիայի ներդրումային ծրագրերը բարեհաջող իրականացվելուց հետո կարող են վարկի գումարի 20%-ի չափով պարգևավճար ստանալ: Պարգևավճարի համար նախատեսված ֆոնդը տրամադրվել է Կլիմայի ներդրումային ֆոնդերի (CIF)՝ «Ավելացնելով վերականգնվող էներգիայի ներդրումները» (SREP) ծրագրի շրջանակներում:

Ձեր հետագա քայլերը, եթե ցանկանում եք արևային էներգիայի տեխնոլոգիաների ոլորտում ներդրումներ իրականացնել՝

I. Արևային էներգիայի տեխնոլոգիաներով զբաղվող Ձեզ համար առավել հարմար մատակարար ընկերության միջոցով սահմանել **ներդրումային ծրագրի կարիքներն ու պահանջները**

II. Կապ հաստատել GEFF-ի **Գործընկեր ֆինանսական կազմակերպության (ԳՖԿ)** հետ ֆինանսավորում ստանալու համար **ebrdgeff.com/armenia/am/financing**

III. Ըստ անհրաժեշտության, ստանալ **անվճար խորհրդատվություն** և ծրագրի գնահատում ոլորտի փորձագետների կողմից

IV. Ստանալ **ֆինանսավորում վարկի կամ լիզինգի տեսքով**

V. **Իրականացնել նախատեսված ներդրումը**

VI. Օգտվել երկարաժամկետ **էներգախնայողությունից և ֆինանսական պարգևատրումից***

* Ներդրման նախագծի բարեհաջող իրականացումից և ստուգումից հետո, բիզնեսի սեփական կարիքները բավարարելու (ոչ վաճառքի) նպատակով իրականացված վերականգնվող էներգիայի ներդրումային ծրագրերը կարող են ստանալ վարկի գումարի 20%-ի չափով պարգևավճար:

Սիրով պատրաստ ենք պատասխանել Ձեր բոլոր հարցերին:

GEFF-ը Հայաստանում
ՀՀ, ք. Երևան | Հանրապետության 62 փողոց, բն. 101
armenia@ebrdgeff.com | +374 10 542 721 | www.ebrdgeff.com/armenia